Ես չեմ կարող հանդուրժել «ժառանգ» օպերացիան. Տիգրան Աթանեսյանը «ընդհատակյա» քայլեր է նկատել քարոզարշավի ընթացքում

29.08.2013 08:47

Սեպտեմբերի 14-ին կայանալիք Փաստաբանների պալատի նախագահի ընտրություններում, ինչպես արդեն հայտնի է, առաջադրվել են չորս թեկնածուներ՝ Աշոտ Թադևոսյանը, Արա Զոհրաբյանը, Տիգրան Աթանեսյանը և Կրոմվել Գրիգորյանը:

Panorama.am-ը Փաստաբանների պալատի ներկայիս վիճակի ու սպասվող ընտրությունների վերաբերյալ զրուցել է ՓՊ նախագահի թեկնածու Տիգրան Աթանեսյանի հետ:

- Արդեն 3 օր է՝ սկսվել է նախընտրական քարոզարշավը, ինչպե՞ս եք անցկացնում այն, գո՞հ եք ընթացքից:

- Նախընտրական քարոզարշավը ես անցկացնում եմ հրապարակային, ընդհատակյա քայլեր չեմ ձեռնարկում, ինչ ասելիք ունեմ, մարդկանց հետ, փաստաբանների հետ հանդիպումներում ասում եմ, և իմ ասելիքներն ու անելիքները ներկայացնում եմ մամուլին: Վստահ չեմ, որ իմ մյուս մրցակիցները անում են նույնը:

- Ինչ-որ կասկածնե՞ր ունեք: Եվ «ընդհատակյա» ասելով ի՞նչ նկատի ունեք:

- Ունեմ տեղեկություններ, որոնք հաստատված չեն, հուսով եմ, որ դրանք սուտ են, բայց քանի որ փաստաբանական կորպուսը փոքր է, մարդիկ միմյանց ճանաչում են, ինձ նման տեղեկություններ են հասնում, որ Պալատից զանգում են մարզեր և ասում են, որ գան ընտրությունների ու ընտրեն Արա Զոհրաբյանին: Հանրային պաշտպանի գրասենյակի աշխատողներից լսել եմ, որ ստորագրություններ են վերցնում, որ ընտրելու են Արա Զոհրաբյանին: Ես չեմ պնդում, որ սրանք փաստեր են, և հուսով եմ, որ սա սուտ է: Այլապես ուղղակի բառեր չկան, ասելու, թե ինչի է դա նման:

- Ինչ-որ քայլեր ձեռնարկե՞լ եք դրա դեմ:

- Քանի որ հաստատված փաստ չունեմ, այսինքն՝ չկա մի փաստաբան, որ գա նստի իմ առջև և գրավոր կամ ձայնագրի այդ ամենը: Ես ասեկոսեների հիման վրա չեմ փորձում գործել, բայց ինչու չեն ասում, որ ես եմ զանգում մարդկանց, ինչու չեն ասում, որ ես եմ ստորագրություն վերցնում: Հիմնական մտահոգությունս դա է, որ պայքարը մրցակիներս տանում են ընդհատակյա, այլ ոչ թե հրապարակային:

- Ո՞ւմ նկատի ունեք, պարոն Աթանեսյան:

- Ես չեմ կարծում, որ մյուս երկուսը՝ Կրոմվել Գրիգորյանը և Աշոտ Թադևոսյանը, լուրջ շանսեր ունեն հաղթելու:

- Ձեզ միակ մրցակից համարում եք Զոհրաբյանի՞ն:

- Իմ մրցակիցը անձ չէ: Իմ մրցակիցը Պալատի լճացումն է: Ես առաջ եմ քաշում գաղափարներ իմ ծրագրով, իսկ իմ հակառակորդը կամ մրցակիցը կարող է բերել ներկայիս լճացումը և ստատուս-քվոյի պահպանումը:

- Պարոն Աթանեսյան, Ձեր նախընտրական տեսահոլովակում, որ տարածել եք, հայտարարում եք, թե փաստաբանը միայնակ է, և Պալատը նրա թիկունքում կանգնած չէ: Այսօր ՓՊ նախագահի թեկնածու Արա Զոհրաբյանը հակադարձեց, որ այդպես չէ, և բազմաթիվ դեպքեր կան, որ Պալատը աջակցել է գործընկեր փաստաբաններին: Դուք զգացե՞լ եք, որ դուք միայնակ եք, և Պալատը իսկապես չի օժանդակում փաստաբաններին:

- Ես ապշած եմ, որ նման հայտարարություն են անում: Պարոն Ջոհրաբյանը սուտ է խոսում, և ասեմ, թե ինչու. 2005 թվականին Վահե Գրիգորյանի գործը, ես եմ կազմակերպել նրա պաշտպանությունը, իսկ Պալատը ձեռքերը լվացել էր և թաքնվել էր: 2009-ին Արթուր Գրիգորյանի, Արա Ջաքարյանի, Դիանա Գրիգորյանի և Մուշեղ Շուշանյանի գործի պաշտպանությանը ես եմ մասնակցել, ես եմ մարդու իրավունքների պաշտպանին դիմել, որպեսզի նա դիմի Սահմանադրական դատարան, դիմում մենք ենք կազմել, բայց Պալատը չկար, ձեռքերը լվացած էր, իսկ պարոն Ջոհրաբյանը գալիս էր ընդամենը գաղտնի, ոչ հրապարակային հանդիպումների ու հարցնում էր' ինչ անենք: Մենք ասում էինք' թող պալատը մասնակցի, մի հայտարարություն անի, բայց Պալատը չէր մասնակցում: Հետևաբար, ես ամենայն պատասխանատվությամբ հայտարարում եմ, որ նա սուտ է խոսում: Ես էլի կարող եմ գործեր օրինակ բերել, բայց իմ ասածն ամենացայտունն է: Երբ զուտ փաստաբանական գործունեության համար են մարդիկ հետապնդվում, ավելորդ ոչինչ չէին արել, Պալատը փախել էր, հետքն անգամ չէր երևում: Նման բացահայտ սուտ խոսելը այն էլ իմ դեպքում...Արա Ջոհրաբյանը գալիս ինձ հետ էր հանդիպում և փորձում էր իբր Պալատի անունից մասնակցել, բայց չմասնակցեց: Ապշելու բան է, որ հիմա նա նման բաներ է հայտարարում:

- Այնուամենայնիվ, պարոն Աթանեսյան, այս տարիների ընթացքում Պալատի գործունեության մեջ Դուք որևէ առաջընթաց չե՞ք տեսնում:

- Հետևյալն ասեմ. Ոչ մեկ չի ուզում հիշել, թե Պալատը ոնց ստեղծվեց ու ինչի հիման վրա: 2005-ին փաստաբանների երկու միություն գոյություն ուներ, որոնք միավորվեցին Պալատի մեջ: Եթե համեմատենք Պալատը ՀՀ Փաստաբանների միության հետ, որը մեծ հաշվով իրենից երկայացնում էր տարեց մարդկանց նարդի խաղալու ակումբ, իհարկե, առաջընթաց կա' զուտ նրանով, որ Պալատը եկել է գրասենյակի տեսքի: Բայց ես անդամակցել եմ Փաստաբանների միջազգային միությանը և համեմատելով այդ միության հետ, որը ղեկավարում էր Տիգրան Տեր-Եսայանը, Պալատը 10 քայլ հետ է. այդ միությունը միշտ բարյացակամ է եղել, միշտ պաշտպանել է իր անդամներին ու ամեն դեպքում, մենք միշտ հպարտացել ենք այդ միությունով: Եթե համեմատենք այդ միության հետ Պալատը ռեգրես է ապրել, ձևական կողմը, շղարշը որ կազմակերպել են, առաջընթաց չէ:

- Պարոն Աթանեսյան, դուք հայտարարություն տարածեցիք, որով տեղեկացնում էիք, որ որոշ փաստաբաններ խնդրել են, որպեսզի իրենք տեսանյութում չերևան, քանի որ «վախենում են ներկայիս Պալատի ղեկավարության բացասական արձագանքից»: Տպավորություն է, թե վախի մթնոլորտ է տիրում Պալատի ներսում:

- Մենք Սյունիքում շատ լավ փաստաբաններ ունենք, ես այնտեղ չէի եղել ու չէի շփվել նրանց հետ: Բա իհարկե, վախի մթնոլորտ է, որովհետև փաստաբանը այսպես կամ այնպես խաբված է ուղղակիորեն Պալատի ղեկավարության կողմից: Չեմ ուզում մանրամասներ փոխանցել, բայց իրավիճակն այդպիսին է:

- Դուք Փաստաբանների պալատի նախագահ Ռուբեն Սահակյանի հետ հարաբերություններ չունե՞ք:

- Երբ Սահակյան Ռուբենը անցյալ տարի դատադուլ էր կազմակերպել ու կանգնել էր Վճռաբեկ դատարանի դիմաց, կներեք, բայց կողքին փաստաբան չկար, երկու-երեք երեխա էին' պաստառներով ու ես էի կանգնած: Չէի վախենում Վճռաբեկ դատարանի դատավորների հայացքից: Երկու անգամ էլ իրեն եմ ընտրել, երկու անգամ էլ ընտրություններին մինչև վերջն եմ սպասել, որպեսզի շնորհավորեմ: Եվ որպես գործընկեր, և որպես Պալատի նախագահ իրեն հարգանքով եմ վերաբերվում և բնական է, ես հեռախոս ունեմ և կարող եմ զանգել ու հետաքրքրվել նրա որպիսությամբ: Բայց ես չեմ կարող հանդուրժել մեր Պալատի էս վիճակը և «ժառանգ» օպերացիան:

- Դուք կարծում եք, որ Ջոհրաբյանի առաջադրումը «ժառանգ» օպերացիայի շարքի՞ց է:

- Միանշանակ, դա «ժառանգ» օպերացիան է: Կրոմվել Գրիգորյանը շանս չունի ընտրվելու, փաստաբանները չեն ընտրի Կրոմվելին, ոչ մի վատ բան իր մասին չեմ ուզում ասել, բայց փաստաբանները գիտեն, որ չեն ընտրի Կրոմվելին: Եթե իրենց ծրագրող գնար, պետք է Կրոմվել Գրիգորյանն ու Արա Ջոհրաբյանը առաջադրվեին ու բնականաբար, ընտրվելու էր Արա Ջոհրաբյանը: Այ սա է օպերացիան: Ինչո՞ւ է Պալատի նախագահն առաջադրում, ինչո՞ւ է անպայման ուզում, որ իր ուզածը դառնա նախագահ: Պալատը իր գրասենյակը չի, իր սեփականությունը չէ, հետևաբար՝ դա «ժառանգ» օպերացիա է, որը պետք է հնարավորինս խանգարել:

Տիգրան Աթանեսյանի նախընտրական ծրագիրը կարող եք կարդալ այստեղ

Աղբյուր' http://www.panorama.am/am/popular/2013/08/27/atanesyan-interview/

Հեղինակ' Հասմիկ Համբարձումյան

Վերադառնալ $(window).load(function(){ if(typeof $(".fb_comments_count").html() != "undefined" && parseInt($(".fb_comments_count").html()) != 0){ updateCommentsCount(window.location.href); } })